

«Պաշտպանելով Արցախը՝ պաշտպանենք Հայաստանը».

*ՀՅԴ ԳԵՄ-ի կազմակերպությամբ
Թորոնթոյի եւ Մոնթրեալի մէջ կայացան
գորակցական հաւաք*



Կարդալ էջ 4:

ՀՅԴ Բիւրոյի Ցայտարարութիւն



2022թ. ապրիլի 13-ին ԱԺ ամպլոնից իր ելոյթի ժամանակ Նիկոլ Փաշինեանի ինքնախոստովանական ջուլցմունքները եւ Հայաստան-Ադրբեջան, Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնների, Արցախի ու Հայաստանի Հանրապետութեան անվտանգային խնդիրների վերաբերեալ յայտնած դիրքորոշումները, փաստերի եւ իրողութիւնների նենգափոխումները վերջնականապէս բացայայտեցին վարչապետի պաշտօնը զբաղեցնողի ու իր վարչախմբի քաղաքական եւ բարոյական սնանկութիւնը:

Կարդալ էջ 3:

Խորհրդարանական
Ընդդիմութիւնը Ազդարարեց
Պաշարի Նոր Մեկնարկը՝
Ազատութեան Հրապարակին
Վրայ Կատարուած
Հանրահաւաքով



Կարդալ էջ 9:

Մոնթրեալի մէջ կայացաւ հայակերտման ամրոց Հայ Կեդրոնի
վերանորոգում «Ահարոնեան» սրահի բացման հանդիսութիւնը



Կարդալ էջ 5:



BOOK YOUR
TEST DRIVE TODAY!

TRO BACHEKJIAN
MIKE TOROSSIAN
KEVORK ASADOURIAN

HONDA
GABRIEL

HONDA

7000, boul. Henri-Bourassa Est,
Montréal-Nord, QC H1G 6C4
☎ : 514 327-7777



Al-Nejmah

MIDDLE EASTERN SUPERMARKET

NOW OPEN
NOW OPEN



Մեփականատեր
Յարութ Միփան

Հնտանեկան բացառիկ գործառնություն
ուր կը գտնէք ձեր բոլոր կարիքները
ուտելիքներու վերաբերեալ

 **IN HOUSE**

COFFEE ROASTING & GRINDING
ROASTING FRESH NUTS
SESAME GRINDING TO MAKE FRESH TAHINA
TANOOR BREAD & IRAQI SAMOON

Մուրճ աղալ եւ խարկել
Հնտեղէն աղալ օրական դրութեամբ
Շուշմայ աղալ եւ թահինի պատրաստել
Թոնիքի հաց եւ իրաքեան սոմուն

Supermarket | Restaurant | Bakery | Halal Butcher
Վաճառատուն, ճաշարան, փուռ, մսավաճառ

PHONE: 289.232.1200
3085 Hurontario St, Unit 1-6, Mississauga



ՀՀ իշխանութիւններից պահանջում ենք հրաժարուել իրենց աղէտալի դիրքորոշումից. ԱՀ ԱԺ յայտարարութիւնը

Ապրիլ 14–ին, Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովը միաձայնութեամբ ընդունեց յայտարարութիւն մը, որուն բովանդակութեան մէջ անընդունելի կը նկատուի Արցախի համար որեւէ այլ կարգավիճակ, բացի ինքնորոշումէն: Ստորեւ՝ յայտարարութիւնը.

Արցախի Հանրապետութեան ներկայիս իրաւաքաղաքական կարգավիճակը ձեւաւորուել է համաժողովրդական կամքի արտայայտութեամբ 3 հանրաքուէների, դրանց արդիւնքում ընդունուած Սահմանադրութեան ազդեցութեամբ եւ հայութեան բոլոր հատուածների միջեւ նախընթաց տարիներին հաստատուած համազգային համաձայնութեան ճանապարհով:

Արցախահայութիւնը քաջ գիտակցում է խաղաղութեան գինը: Արցախի պետականութիւնը եւ պատմական հայրենիքում ազատ ու անկախ ապրելու իրաւունքը բացարձակ արժէքներ են, եւ դրանցից անգամ պատերազմի սպառնալիքը Հի կարող մեզ հետ պահել: Հայաստան–Ադրբեջան չակերտաւոր խաղաղութեան օրակարգով Արցախն Ադրբեջանին բռնակցելու ցանկացած բանակցային գործընթաց ինքնին, ինչպես նաեւ դրանից բխող փաստաթղթի ստորագրումը տապալում է ոչ միայն Արցախի պետականութիւնը, այլեւ արցախահայութեան իր պատմական հայրենիքում ապրելու անքակտելի իրաւունքը:

Պահանջում ենք, որ Հայաստանի իշխանութիւնները հրաժարուեն իրենց ներկայիս աղէտալի դիրքորոշումից եւ առաջնորդուեն բացառապէս այդ արժէքներով: Ոչ մի իշխանութիւն իրաւունք չունի խաղաղութեան պատրուակով Արցախի համար անընդունելի կարգավիճակի, ինչպէս նաեւ միջազգայնօրէն ճանաչուած ինքնորոշման իրաւունքի բանակցային նշաձողն իջեցնելու:

Արցախահայութեան անունից դիմում ենք՝

Աշխարհասփիւռ հայութեանը՝ այս արդար պայքարում միասնաբար եւ վճռակաւօրէն կանգնել Հայաստանի եւ Արցախի, մեր եղբայրների ու քոյրերի կողքին:

ՀՀ ԱԺ մեր գործընկերներին՝ չչեղուել ՀՀ գերագոյն խորհրդի 1992 թուականի յուլիսի 8–ի որոշման ուղեգծից:

Ռուսաստանի ղեկավարութեանը՝ մեզ համար խիստ կարեւոր խաղաղապահ առաքելութեան ընթացքում առիթ չտալ որեւէ մէկին՝ շահարկել ծագող խնդիրները, որպես Արցախի ժողովրդի հետագայ անվտանգութիւնը հարցականի տակ դնելու հիմք:

ԵԱԿՀ Մինսկի համանախագահ երկրներին՝ անկախ առկայ այլ տարածայնութիւններից, ջանքեր գործադրել, պահպանելու ԼՂ–ի հիմնախնդրի կարգաւորման միակ միջազգային մանդատ ունեցող ձեւաչափ:

ՀՅԴ Բիւրոյի Յայտարարութիւն

Սկիզբը էջ 1

Այլեւս կասկածից վեր է, որ Նիկոլ Փաշինեանը կայացրել է Արցախը Ադրբեջանին յանձնելու եւ թուրք–ադրբեջանական տանդեմի պահանջները բաւարարելու ազգակործան որոշում:

Սակայն ո՛չ Նիկոլ Փաշինեանը, ո՛չ էլ որեւէ քաղաքական ուժ կամ անձանց խումբ չունի որեւէ մանդատ Արցախի եւ արցախահայութեան փոխարէն կայացնելու նրանց ճակատագրի վերաբերեալ նման որոշում:

Ներկայացուող «խաղաղութեան» օրակարգը իրականում միտուած է վարչախմբի իշխանութիւնը երկարաձգելուն եւ յանգեցնելու է Արցախի եւ Հայաստանի համար լրջագոյն սպառնալիքների, անվտանգային նոր մարտահրաւէրների, նոր պատերազմի, նոր կորուստների, նոր զոհերի ու նոր կապիտուլիացիայի: Արցախեան վերջին պատերազմի ընթացքում եւ դրանից յետոյ իշխանութիւնների ապաշնորհ ու ձախող վարքագիծը եւ տեղի ունեցող գործընթացները դրանց վառ վկայութիւնն են:

Ստեղծուած ծանրագոյն իրավիճակում բեկում կարող է առաջանալ, երբ համազգային ներուժի մեկտեղմամբ դիմադրութիւն ցոյց տրուի դաւադիր պայմանաւորուածութիւններով ու սպառնալիքներով հայ ժողովրդին պարտադրուող օրակարգերին: Հայաստանի գործող իշխանութեան հեռացումը եւ բանակցողի փոփոխութիւնը իրավիճակից դուրս գալու առաջին քայլն է:

Առ այդ,

1. Միջազգային հանրութեան, այդ թւում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների ուշադրութեանն ենք յանձնում, որ Նիկոլ Փաշինեանի կողմից ուղղակի կամ անուղղակի, բանաւոր կամ գրաւոր ձեւով Արցախը Ադրբեջանի ենթակայութեանը յանձնելու որեւէ յանձնառութիւն լեգիտիմ չէ եւ առ ոչինչ է: Արցախի ժողովրդի՝ իր բնօրրանում ինքնորոշուելու իրաւունքն ամրագրուած է միջազգային իրաւական ակտերով, ինչը ԵԱՀԿ Մինսկի խմբի չրջանակներում, 2007 թուականից, որպէս սկզբունք դրուած է արցախեան հակամարտութեան խաղաղ կարգաւորման հիմքում:

2. Ուղերձ ենք յղում հայ ժողովրդին դիմադրաւելու ներքին ու արտաքին բոլոր սպառնալիքներին, չյուսահատուելու, չհամակերպուելու, լինելու միասնական, հաւատարմ սեփական ուժերին ու պայքարելու՝ յանուն հայ ազգի իրաւունքների եւ շահերի: Տոկուն եւ անկոտրում արցախահայութեանը վստահեցնում ենք որ հայ ազգը զօրավիճ է իր արդա՛ր պայքարին:

3. Հաւատարիմ իր առաքելութեանը՝ Դաշնակցութիւնը իր համահայկական կառոյցով վճռական է այս պայքարում լինելու եւ՝ առաջամարտիկ եւ՝ զինուոր: Միաժամանակ յայտնում ենք մեր պատրաստակամութիւնը համագործակցելու բոլոր նրանց հետ, ովքեր պատրաստ են պայքարելու յանուն արժանապատիւ ու անվտանգ Հայաստանի ու Արցախի:

ՀՅԴ Բիւրո
14.04.2022թ.

Փաշինեան. «Միջազգային Հանրութիւնը Մեզի Կրկին Կ’ըսէ՝ Քիչ Մը Իջեցուցէք Լեռնային Ղարաբաղի Կարգավիճակի Հարցին Մէջ Զեր Նշաձողը»

«Միջազգային հանրութիւնը Հայաստանի եւ Արցախի շուրջ համախմբում կ’ապահովէ, եթէ Երեւանը իջեցնէ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցին մէջ իր նշաձողը», 13 ապրիլին խորհրդարանին մէջ յայտարարեց Նիկոլ Փաշինեան՝ աւելցնելով, որ կ’ուզէ ուղղել անցեալի սխալներն ու հիմա անկեղծ խօսիլ խորհրդարանի եւ հանրութեան հետ՝ Ղարաբաղի շուրջ ստեղծուած իրավիճակին մասին:

«Այսօր միջազգային հանրութիւնը մեզի յստակ կ’ըսէ՝ ըլլալ աշխարհի միակ երկիրը, որ երկկողմանի մակարդակի վրայ չի ճանչնար Թուրքիոյ դաշնակից Ազրայճանի տարածքային ամբողջականութիւնը, մեծ վտանգ է ո՛չ միայն Արցախին, այլեւ Հայաստանի համար: Այսօր միջազգային հանրութիւնը մեզի կրկին կ’ըսէ՝ քիչ մը իջեցուցէք Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի հարցին մէջ ձեր նշաձողը եւ միջազգային մեծ միաւորում կ’ապահովէք Հայաստանի եւ Արցախի շուրջ», յայտնեց վարչապետը:

Խորհրդարանի ամպիոնէն մէկ ժամ տեւած իր ելոյթին մէջ Փաշինեան չյստակացուց, որ Երեւան ի վերջոյ համաձա՞յն է միջազգային հանրութեան առաջարկին՝ իջեցնել կարգավիճակի վերաբերեալ իր սահմանած նշաձողը, թէ՞ ոչ: Սակայն ելոյթի մէկ այլ հատուածին մէջ, խօսելով խաղաղութեան մասին՝ Փաշինեան նշեց, որ իր կառավարութեան մօտեցումը փոխուած է այս հարցին գծով, եւ որ եթէ մինչ այդ կարեւոր կը նկատուէր նախ կարգավիճակը, եւ անվտանգութիւնը կը կապուէր ատոր, ապա այժմ առաջին դերքի վրայ է Արցախի անվտանգութեան եւ ժողովուրդի իրաւունքներու հարցը, որմէ ալ պէտք է բխի կարգավիճակը. «Այլ ձեւով ըսուած՝ մենք կ’արձանագրենք, որ կարգավիճակը տուեալ իրադրութեան մէջ ոչ թէ նպատակ է, այլ միջոց՝ ապահովելու Լեռնային Ղարաբաղի հայութեան անվտանգութիւնն ու իրաւունքները»:

CLIMATISATION TECHNO AC Air Conditioning/Heating/Ventilation Service, Repair, Sales, Installation Residential, Commercial General Construction (Doors, Windows, Insulation...) RBQ: 5784-1082-01 514-838-3230 climatisationtechnoac@gmail.com Vahram Noubarian / Sako Hasarkuzian	Groupe Sutton - Performer Inc. 705, boul. St-Jean, suite 160 Pointe-Claire, QC H9R 0M9 ALBERT ARKILANIAN Courtier immobilier résidentiel Residential Real Estate Broker aarkilanian@sutton.com Cell: 514.962.8822 Bur: 514.426.9595 Fax: 514.426.9596 www.albertarkilanian.com	Tro Bachekjian Représentant des ventes Véhicules d'occasion Pre-owned Sales Consultant tbachekjian@gabriel.ca Tél.: 514 327-7777 Poste : 4139 Télééc.: 514 262-8019 CONCESSIONNAIRE DE QUALITÉ
École De Conduite AZIG Driving School Tel: 514-336-1110 Moniteur-Instructeur AUTOECOLEAZIG@HOTMAIL.COM 1400, rue Sauvé O, Montréal, QC H4N 1C5, Suite 1438 Centre Adonis II	Hôtel du Parlement/ Parliament Building 1045, rue des Parlementaires Bureau/Office 321 Québec (Québec) G1A 1A4 Tél./Phone 418 644-4050 Bureau de circonscription/ Riding Office 4599, boulevard Samson, bur. 201 Laval (Québec) H7W 2H2 Tél./Phone 450 686-0166 Télééc./Fax 450 686-7153 Guy.Ouellette.CHOM@assnat.qc.ca assnat.qc.ca	NAZARETH CLASSIC GRILL 550 Curé Labelle, suite 17, Ste-Rose, QC H7L 4V6 Tel: 450.937.4064 Email: resto.nazareth@hotmail.com
KIA GABRIEL NORD 6464 Boul Henri-Bourassa E, Montréal-Nord, QC H1G 5W9 kiagabrielnord.com Sam Karadanaian Directeur des ventes Sales Manager T 514 323-7777 Ext. 5921 E skaradanaian@gabriel.ca F 514 395-9275	KRIKOR MAROUNIAN RLU Independent Financial Security Broker Life Insurance • Disability & Critical Illness Insurance Group Insurance • RRSP/TFSA/RESP Travel/Visitor Medical Insurance 11820 General Giraud Montreal, QC H4J 2H6 krikormar@gmail.com Res: (514) 332-7021 Fax: (514) 731-7499 Cell: (514) 927-2666	NETTOYEUR MARIE-CLAIRE CUEILLETTE ET LIVRAISON GRATUITE À DOMICILE ET AU BUREAU (MONTREAL ET LAVAL) 2535 de Salaberry, Montréal Tél: 514.334.7830

«Պաշտպանելով Արցախը՝ պաշտպանենք Հայաստանը». ՀՅԴ ԳԵՄ-ի կազմակերպութեամբ Մոնթրեալի մէջ կայացաւ զօրակցական հաւաք

ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութեան կազմակերպութեամբ, Ապրիլ 5-ին Մոնթրէալի ՀՀ հիւպատոսութեան գրասենեակին դիմաց կայացաւ հանրահաւաք, որուն իրենց մասնակցութիւնը բերին ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութեան, ՀՅԴ Գանատայի պատանեկան միութեան եւ ՀՅԴ «Արմէն Գարօ» ուսանողական միութեան անդամներ: Ի պաշտպանութիւն Արցախի եւ Հայաստանի զօրակցական հաւաքը կայացաւ համաժամանակ երեւանի մէջ ընթացք առած Հայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի խորհրդարանական ընդգիծութեան «Հայաստան» եւ «Պատիւ ունեմ» խմբակցութիւններու նախաձեռնած «Պաշտպանելով Արցախը՝ պաշտպանենք Հայաստանը» խորագրով հանրահաւաքին:

«Արցախը ծախու չէ», «Ազատութիւն գերիներուն», «Նիկոլ հեռացիր» եւ նմանատիպ վանկարկումներով երիտասարդները իրենց բողոքն ու ընդվզումը յայտնեցին Պատուոյ Հիւպատոսին: Յանուն երիտասարդութեան հանդէս եկաւ ՀՅԴ ԳԵՄ-ի «Բեկոր Աշոտ - Լեւոն Շանթ» մասնաճիւղի ատենապետ ընկՏ. Թալիա Ճապրայեանը: Ան նշեց, որ արցախահայութիւնը այս օրերուն բազում խնդիրներու դէմ յանդիման կը գտնուի, ըլլայ կենցաղային, անվտանգային թէ բարոյական, իսկ Հայաստանի ու Արցախի կառավարութիւնները արհամարհելով արցախահայութեան դիմագրաւած դժուարութիւնները, ճիգ չեն խնայեր Թուրքիոյ եւ Ատրպէյճանի հետ բարելաւելու իրենց յարաբերութիւնները: «Այսօր, բոլորս հաւաքուած ենք ո՛չ ըսելու անարդարութեան, ո՛չ ըսելու հողատուութեան, ո՛չ ըսելու դաւաճանութեան եւ կանգնելու արցախահայութեան կողքին», նշեց ընկՏ. Ճապրայեան:

Հաւաքի աւարտին, ՀՅԴ Գանատայի երիտասարդական միութեան կողմէ ստորագրուած եւ ՀՀ գործող իշխանութիւններուն հասցէագրուած նամակ մը յանձնուեցաւ Քեպէգի մօտ ՀՀ պատուոյ հիւպատոս Լեւոն Աֆէյեանին: Նամակին մէջ յատկապէս կը նշուի.

«2018-էն ի վեր, համերաշխութեան թաւշեայ խոստումներով երկրի ղեկին յայտնուած ՀՀ իշխանութիւններու քաղաքականութեան պատճառով՝ հայ ազգը երկփեղկուեցաւ ու վերջապէս՝ հասաւ պառակտման: Աւելի ուշ, 2020-ի Սեպտեմբերին, նոյն ղեկավարութեամբ դիմակայեցինք թուրք-ազերիական յարձակումը Արցախի վրայ, որ աւարտեցաւ նոյն տարուայ Նոյեմբեր 9-ի ամօթալի ու յանձնուողական համաձայնութեամբ:

Այդ օրէն ի վեր, թշնամին կանգ չէ առած իր ոտնձգութիւններուն ու սպառնալիքներուն մէջ: Անոր ոտքը ու ստուերը առ այսօր դեռ Միւնիք, Գեղարքունիք, Խրամորթ է ու Փառուի: Այս բոլորին ի տես, Հայաստանի ներկայ վարչախումբը կը խօսի «խաղաղութեան դարաշրջան»ի ու հայ-թրքական «եղբայրութեան» մասին: Իսկ անոր ղեկավարը, Ապրիլի 6-ին, բանակցութիւններու սեղան պիտի նստի ազերի բռնապետին հետ՝ նոյն այդ «խաղաղութեան դարաշրջան»ի կեղծ ու հայրենակոործան օրակարգով: Պահը ճգնաժամային է եւ օղակը արագօրէն կը սեղմուի Արցախի ու Հայաստանի շուրջ:

- Ի տես այս բոլորին՝ մենք, ցեղասպանութենէ ճողոպրած ժողովուրդի ժառանգներս, Հայաստանը գրաւած բազում օտար ներխուժողներու անկումը սերտածներս ՝ վերստին պիտի ընդվզինք եւ վերջ տանք մեր տունէն ներս թափանցած պարտուողականութեան ու անձնատուութեան բիծին:

- Ապրիլի 6-ին ու անկէ ետք՝ կարելի չէ՝ որեւէ զիջումի անուան տակ՝ հարցականի տակ դնել Հայաստանի Հանրապետութեան սահմանները, ինքնիշխանութիւնը եւ անվտանգութիւնը:

- Ապրիլի 6-ին եւ անկէ ետք՝ կարելի չէ՝ սակարկութեան նիւթ դարձնել Հայոց ցեղասպանութիւնն ու անոր յաջորդած՝ մեր հայրենազրկման աղաղակող փաստը:

Վերջապէս, Ապրիլի 6-ին եւ անկէ ետք՝ կարելի չէ՝ շարունակել հայրենական կորուստներու այս գահալիճ ընթացքը ու ձեւացնել՝ որ յօգուտ Հայաստանի է այս բոլորը»:

Թորոնթոհայուրիւնը Արցախի եւ Հայաստանի Կողքին. «Պաշտպանելով Արցախը՝ Պաշտպանենք Հայաստանը» զօրակցական հաւաք

Շաբաթ 9 ապրիլին, Թորոնթոյի Հայաստանի Հանրապետութեան հիւպատոսարանին առջեւ տեղի ունեցաւ զօրակցական հաւաք՝ ի նպաստ Արցախի եւ Հայաստանի, ներկայութեամբ երիտասարդ հայորդիներու, որոնք բարձրացուցած էին Արցախի եւ Հայաստանի դրօշակները եւ պաստառներ, որոնց վրայ գրուած էր՝ «ՈՉ ԶԻՋՈՒՄՆԵՐՈՒՆ», «ՈՉ Հայրենազրկումին», «Պաշտպանելով Արցախը՝ Պաշտպանենք Հայաստանը», «Յանուն Արցախի, Փրկե՛նք Հայաստանը», «Սփիւռքը Արցախի Կողքին է», «Նիկոլը չի ներկայացներ հայութեան շահը», «Թուրքն իմ թշնամին է», «Հայաստանը Թրքական Միջանցք Չէ», «Արցախը Ազրպէյճանին Մաս Պիտի Չկազմէ», «Տէր ենք Արցախին, Տէր ենք Հայաստանին», «Համազգային դիմադրութեամբ պիտի հասնինք յաղթանակի», «Յանուն Արցախի, Յանուն Հայաստանի, Յանուն Հայ ժողովուրդի, պիտի հասնինք յաղթանակի»:

Հաւաքի բացումը կատարեց ՀՅԴ Գանատայի Երիտասարդական Միութեան (ԳԵՄ) «Միմոն Զարեան» մասնաճիւղի անդամ Սերենա Ղազարեանը, որ նշեց, թէ Հայաստանի գործող իշխանութիւնը, արհամարհելով արցախահայութեան դիմագրաւած դժուարութիւնները, ճիգ չի խնայեր Թուրքիոյ եւ Ազրպէյճանի հետ բարելաւելու իր յարաբերութիւնները: Այս բոլորին դիմաց, կառչելով «խաղաղութեան դարաշրջան» գաղափարին, ընդունելի կը համարէ բանակցային սեղանին դրուած ազրպէյճանական ու թրքական բոլոր նախապայմանները:

Ապա Ղազարեան բացատրեց որ հաւաքը կը նպատակադրէ՝ Հայաստանի այսօրուան իշխանութիւններուն ցոյց տալ, որ իրենք իրաւունք չունին հայ ժողովուրդի սեփականութիւնը, հայրենիքը, իրաւունքները գիջելու: Ամբողջ աշխարհին ցոյց տալ, որ կը բանակցին անձի մը հետ՝ Նիկոլ Փաշինեան անունով, որ չի ներկայացներ ազգը, եւ վերջապէս թուրք-ազերի թշնամիին իմացնել, որ հայութեան յանձնառու հատուածը Հայ Դատի պահանջատիրութեան իր անդուլ պայքարը կը շարունակէ անշեղօրէն, աշխարհի չորս ծագերուն:


Խօսքը ուղղելով Փաշինեանին, Ղազարեան ըսաւ. «Ցեղասպանին հետ սեղան նստիլն ու համաձայնութիւններ մշակելը նոր ցեղասպանութիւններու ու կորուստներու առիթ կ'ընձեռէ: Մենք, ցեղասպանութենէ ճողոպրած ժողովուրդի ժառանգներս, ընդվզած ենք եւ չենք ընդունիր մեր տունէն ներս թափանցած պարտուողականութեան ու անձնատուութեան բիծը: Մենք, սփիւռքի մէջ ծնած եւ հասակ առած երտասարդներս՝ մեր ամբողջական ներուժով, Արցախի եւ Հայաստանի կողքին ենք, հայ զինուորի եւ հայկական բանակի կողքին ենք»:

Ապա, ՀՅԴ «Քրիստափոր» Պատանեկան Միութենէն Դրօ Չարչաֆեանը կարդաց Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի Յայտարարութիւնը:

ՀՅԴ «Սողոմոն Թեհլիրեան» կոմիտէի անունով խօսք առաւ Ժան Պալճեան: Ան յայտնեց, որ ոչ մէկ ընտրուած կառավարութիւն իրաւունք ունի իր երկրին սահմանները հարցականի տակ դնել եւ թէ Փաշինեան ժողովուրդի համաձայնութիւնը չունի հայապատկան հողեր նուիրելու թշնամիին եւ իրաւունք չունի մեր անունով բանակցելու թշնամիին հետ կամ որոշելու մեր հայրենիքին ապագան: Պալճեան աւելցուց՝ «Մենք, Արամ Մանուկեանի, Զօրավար Դրոյի, Գէորգ Չաւուշի, Սերոբ Աղբիւրի, Թաթուլ Կրպէյեանի, Շահէն Մեղրեանի, Կարօտի, Քրիստափոր Արթինի, Գէորգ Հաճեանի ու Ալպերի ընդմէջէն պիտի շարունակենք մեր պայքարը, ստեղծելու ինքնիշխան Արցախ ու անվտանգ Հայրենիք»:

Պալճեան լուսարձակի տակ առաւ ամէնուրէք մեր բողոքի ալիքները բարձրացնելու կարեւորութիւնը նշելով որ Պրիւքսէլի մէջ այս իշխանութւինները մէկդի դրին մեր գերիներու եւ անյայտ կորած տղոց թղթածրարը եւ թէ միջազգային քաղաքական կողմերը պէտք է լուծու՞մ գտնեն այս հարցին: Ան աւարտեց իր խօսքը ըսելով՝ «Իմ անունս է Հայ, Մականունս Շան, Շուագոյնս միշտ ուժեղ է, Կեցցէ՛ Սփիւռք, Արցախ ու Հայաստան»:

Խաժակ Գուլաճեան

 Chadir Meat & Restaurant T. 416-750-7404 T. 416-750-7400 1848 Lawrence Avenue E. Scarborough, ON M1R 2Y4 E-mail: info@ghadirmeatmarket.com	 House of Taste and Quality 2094 Lawrence Ave. E. Unit # 2 Scarborough, ON. M1R 2Z6 Tel: 416.754.1888 416.441.2450	 ALEPPO KEBAB Rest. Chef Zak Cell: 416-701-9191 647-323-5950 1960 Lawrence Ave. E., Scarborough, ON M1R 2Z1 (Lawrence and Tower Dr) www.aleppokebab.ca
 ARZ fine foods The Essence of Mediterranean Gourmet Since 1989 Website: arzfinefoods.com Email: info@arzfinefoods.com Scarborough Location 1909 Lawrence Ave E, Scarborough, ON M1R 2Y6 (416) 755-5084 Mississauga Location 720 Bristol Rd W, Mississauga, ON L5R 4A5 (905) 502-9292	 Sutton Sutton Group-Admiral Realty Inc., Brokerage 1206 Centre Street, Thornhill, Ontario L4J 3M0 Annie Varbedian Sales Representative Direct: (416) 918-3615 Office: (416) 739-7200 Fax: (416) 739-9367 annievarbed@hotmial.com www.suttongroupadmiral.com	 hearing aid source Andre Ayvazyan HIS B.A.S andre@HearingAidSource.ca 416 754 4327 (HEAR) Parkway Mall, 85 Ellesmere Rd., #65, Toronto, ON, M1R 4B9
 Gary Chahinian President, Broker of Record 416-258-8892 Gabriel Chahinian Sales Representative 647-580-5818 The Diamond Realty	 I.D.A. Part of the Royal family of pharmacies. Pharmacists Sarkis Balian Vartan Balian Maral Abdalian Balian Cassandra Pharmacy Inc. 2040 Victoria Park Ave. Toronto, Ontario M1R 1V2 Tel. : 416.449.2040 Fax: 416.449.2048	 ANI BAKERY ԱՆԻ ՓՈԱՊԱՆ Middle Eastern Pizza Lahmajoun ARSEN DABBAGHIAN 25 Howden Road, Unit #2 Scarborough, Ontario M1R 3C8 Tel: 416.285.7164

Մոնթրեալի մէջ կայացաւ հայակերտման ամբողջ Հայ Կեդրոնի վերանորոգումը «Ահարոնեան» սրահի բացման հանդիսութիւնը



Հայ կեդրոնները սփիւռքահայութեան համար եղան հայրենի տուն, հայերու հաւաքավայր, մարմնամարդական, մշակութային, կրթական եւ ընկերային աշխատանքներու ժրաջան փեթակ, ազգային դիմագիծի պահպանման կռուան, Հայաստանի ու սփիւռքի միջեւ կամուրջ եւ այլասերումի դէմ պայքարող բաբախուն սիրտ։ Մոնթրէալի Սուրբ Յակոբ եկեղեցւոյ կից Հայ Կեդրոնը եւս, որ յիստէն տարի առաջ ծնունդ առաւ գաղութի ընդարձակման եւ աշխուժացման կարիքներուն ընդառաջելու համար, հիմնաքարը հանդիսացաւ հայակերտման ու հայապահպանման աշխատանքներուն ու դարձաւ սիրուած հաւաքավայրը յաջորդական սերունդներուն։

Վերջին երկու տարուան ընթացքին, օգտուելով համաճարակի ստեղծած սահամանափակումներէն եւ գործադրելով երկար տարիներու նախատեսուած ծրագիրը, տեղի ունեցաւ Հայ Կեդրոնի եւ մասնաւորաբար Ահարոնեան սրահի վերանորոգման աշխատանքները։

Եւ ահա, կիրակի 3 ապրիլ 2022-ին, տեղի ունեցաւ սրահի պաշտօնական բացումը, կազմակերպութեամբ՝ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ ներկայութեամբ՝ Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեանի եւ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Հոգեւոր տեսուչ Գերաշնորհ Տ. Սուրէն Արք. Գաթարոյեանի, Սուրբ Պատարագի աւարտին, ժողովուրդը ինչպէս նաեւ կեդրոնի ազգային եւ ուղեկից բարեսիրական, մշակութային, մարմնակրթական եւ ընկերային կառույցներու ներկայացուցիչներ հետեւեցան առաջնորդական թափօրին բարձրանալով կեդրոնի սանդուխներէն վեր։ Գլխաւոր նուիրատուներէն՝ Տիկին Շաքէ Կէօնճեան եւ Տէր եւ Տիկին Արթօ եւ Ալիս Մարգարեան, իրենց անուներով փորագրուած յատուկ մկրատներով, Գերաշնորհ Սրբազան Հօր Տ. Բաբգէն Արք. Չարեանի եւ Հոգաբարձութեան ատենապետ՝ Գրիգոր Տէր Ղազարեանի հետ միասին կատարեցին սրահի դրան մուտքին զետեղուած ժապաւէնի հատու՝ մը։

Ներկաները ծափողջիւններով մտան վերանորոգուած ու շքեղ Ահարոնեան սրահէն ներս։ Սովորականէն աւելի ընդարձակ ու լուսաւոր էր։ Տեղ-տեղ զետեղուած էին փոքր կլոր սեղաններ զեղեցիկ ծաղիկներով զարդարուած. սրահի կեդրոնը կար հիւրասիրութեան անուշեղէնի սեղան մը, որուն վերեւ կը շողար տիար Հայկ Մաճարեանի նուիրած կեդրոնական զեղեցիկ ջահը։ Ազնիւ նուիրատուն նոյն ջահի փոքր օրինակներով զեղեցկացուցած էր ոչ միայն սրահի ներքին պատերը այլեւ սրահէն դուրս կեդրոնի ճակատը։

Սրահէն ներս, բոլորին ուշադրութիւնը կը գրաւէր Աւետիս Ահարոնեանի լուսաւոր հարթաքանդակը, որ ստեղծագործութիւնն էր ազգասէր ու վաստակաշատ արուեստագէտ տղթ. Մկրտիչ Տարագճեանի։

Առաջին հերթին բեմ բարձրացաւ Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Հոգաբարձութեան ատենադպիր Թորոս Պապիկեան, որ Սուրբ Յակոբ եկեղեցւոյ Հովիւին եւ Հոգաբարձութեան անունով բարի գալուստ մաղթելէ ետք ներկաներուն, ամփոփ գիծերու մէջ ներկայացուց Ահարոնեան սրահի վերանորոգման

պատմութիւնը։ Ան իր խօսքին մէջ նշեց թէ յունուար 2019-ին վերաշինութեան յանձնախումբ մը կազմուեցաւ, պատրաստուեցան ճարտարապետական գծագրութիւնները – ծրագրին նախահաշիւը։ Եւ սեպտեմբեր 2020-ին աշխատանքը մտաւ հունի մէջ, երբ ձեռք բերուեցաւ շինարարական արտօնագիրը։

Թորոս Պապիկեան Հովիւին – Հոգաբարձութեան անունով խորին շնորհակալութիւն յայտնեց Տիկին Կէօնճեանին եւ Տէր եւ Տիկին Արթօ եւ Ալիս Մարգարեաններուն, իրենց կատարած մեծ ներդրումին համար, որ հանգուցեալ Պետրոս Արայանեանի նուիրատուութեան հետ, կը հանդիսանար ծրագրին սերմը։ Իսկ ծախսի մնացեալ գումարը ապահովելու համար, նպատակադրուեցաւ նուիրարչաւ մը։ Կազմակերպիչներուն սկզբնական նպատակը 1.1 միլիոն տոլար էր, բայց նուիրատուութիւնները գերազանցեցին ակնկալութիւնները եւ հաւաքուած գումարը անցաւ 1.5 միլիոնի սահմանները, որուն շնորհիւ իրականացաւ նաեւ կեդրոնի մուտքի, Համազգայինի գրատարածի անկիւնի եւ լուսցարաններու վերանորոգումը։

Հոգաբարձութեան ատենադպիրը հերթով շնորհակալութիւն յայտնեց տիար Հայկ Մաճարեանին, արուեստագէտ տղթ. Մկրտիչ Տարագճեանին եւ Prestale Inc. ընկերութեան իրենց ներդրումներուն համար. շնորհակալութիւն Թամար Շահինեանին «Հայ Հորիզոն»-էն իր հաղորդումներով համայնքիս զաւակներուն մօտ մեծ խանդավառութիւն ստեղծելուն համար. Պապիկեան նաեւ շնորհակալութիւն փոխանցեց բոլոր նուիրատուներուն իրենց անվերապահ նեցուկին համար եւ յատուկ շնորհակալութիւն յայտնեց ամէն այն ազգայիններուն եւ յանձնախումբներուն, որոնք իրենց աշխատանքով ու նիւթական մասնակցութեամբ սատարեցին այս գործի յաջողութեան։ Ան նշեց թէ բոլորին անունները յիշուած են «ԱՀԱՐՈՆԵԱՆ ՍՐԱՀ» պատկերազարդ յիշատակի գրքոյկին մէջ, որ Սուրէն Արք. Գաթարոյեանի «ՎԵՐԱԿԱՂՂ ԱՆՅԵԱԼԻ ՅՈՒՇԵՐԷԱՍ» (Ահարոնեան սրահի նորոգման առիթով գրուած) գրքոյկին հետ պիտի տրամադրուի բոլորին։

Նախքան իր խօսքը փակելը, Թ. Պապիկեան ըսաւ. «Այսօր, Ահարոնեան սրահի վերաբացումով, յոյսով ենք որ Հայ Կեդրոնի գործածողներու թիւը պիտի գերազանցէ իր նախագովիտեան թիւերը, եւ Հայ մանուկը, հայ պատանին ու երիտասարդը, չափահասն ու տարեցը դարձեալ պիտի հաւաքուին հոս, պիտի տան առաւել կեանք այս գեղեցիկ սրահին։ Պիտի տան նոր շունչ Հայ Կեդրոնին, եւ զայն վերածեն եռուն հայաբոյր հաւաքավայրի մը»։

Ապա ան բեմ հրաւիրեց Սուրբ Յակոբ Առաջնորդանիստ Մայր եկեղեցւոյ Հոգեւոր տեսուչ Գերաշնորհ Տ. Սուրէն Արք. Գաթարոյեանը, որ իր սրտի խօսքին մէջ նշեց թէ այս պահը գինք յիշեցուց շուրջ 50 տարիներ առաջ, ժողովուրդի ունեցած խանդավառութեան երբ մոնթրէալաբնակ սակաւաթիւ հայութիւնը կ'ուռճանար եւ երբ օրուան Հոգաբարձութիւնն ու կոմիտէութիւնը որոշում առին անցնիլ Saint Zotique-ի փոքր եկեղեցիէն դէպի մեծ կեդրոնի մը կառուցման։ Այդ օրերուն ժողովուրդը խրախուսողը Ղազարոս Աղայեանի «Ծիծեռնակը» երգն էր, երբ ներգաղթողներ Միջին Արեւելքէն

ձգելով իրենց տաք օճախը, կու գային աշխարհի այս կողմը սարքելու նոր բոյն մը ծիծեռնակի նման միշտ յիշելով իրենց հին բոյնը։ Այսպէս սփիւռքի տարածքին այլ հայահոծ գաղութներու նման, Մոնթրէալն ալ պահելու համար իր հայեցի ինքնութիւնը կառուցեց եկեղեցի, անոր կողքին հիմնեց Հայ Կեդրոն եւ գնեց հողաշերտին դիմաց գտնուող դպրոցը։ Սրբազանը յայտնեց նաեւ թէ Հայ Կեդրոնը հայրենիք է. թէ մեր զաւակները ամէն օր Արարատ լեռը չեն տեսներ, թէ մեր զաւակները ամէն օր Հայաստանի օդը չեն շնչեր, բայց այս կեդրոնը Արարատի եւ Հայաստանի օդին միացումն է որ կը կատարէ. եւ մենք ու մեր զաւակները արժանի ենք այս նուիրական կեդրոնին եւ բոլորիս պարտքն է պահել զայն եւ փոխանցել միշտ յաջորդ սերունդներուն։

Այնուհետեւ Թորոս Պապիկեան բեմ հրաւիրեց Գանատայի Հայոց Թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Բաբգէն Արք. Չարեանը փոխանցելու իր սրտի խօսքը։ Սրբազանը նշեց թէ հաւաքական աշխատանքն է որ արդիւնք կու տայ եւ հրաշքներ կը գործէ։ Ան բարձր գնահատեց բարերաններուն, ազգայիններուն, յանձնախումբներուն եւ ժողովուրդին ցուցաբերած գուրգուրանքն ու յարգանքը Հայ Կեդրոնի շինութեան նկատմամբ եւ բարձրաձայնեց «Իւրաքանչիւրիդ վարձքը կատար»։ Սրբազանը անդրադառնալով այսօրուայ հայ իրականութեան շեշտեց կարեւորութիւնը բարեգարդելու, աշխոյժացնելու եւ վերանորոգելու մեր սփիւռքեան կառույցները ըլլան անոնք դպրոցներ թէ կեդրոններ, որպէսզի բոլորս ալ վերանորոգ կամքով շարունակենք մեր սրբազան առաքելութիւնները դաստիարակելու սերունդներ հայ շունչով ու հայ ոգիով անոնց աչքերը սեւեռելով դէպի Հայաստան, դէպի մեր սրբազան լեռը։

Հինգ տասնամեակներէ ի վեր այս կեդրոնը կը շնչէ միշտ նո՛ր ուժ ու նո՛ր կեանք տալով իր ժողովուրդին։ Հայ եկեղեցին յոյս ու հաւատք կը ներշնչէ. ազգային մարմինները կը խրախուսեն ժողովուրդը միշտ բարձր պահելու ազատասէր հայու ոգին եւ անխոնջ կերպով հետապնդելու Հայ Դատը. Հորիզոն շաբաթաթերթը իր յօդուածներով կը հանդիսանայ հայակերտումի դարբնոց՝ հայ լեզուի պահպանումով, մեր հոգեւոր, մշակութային, բարոյական ու ազգային աւանդութիւններուն ու արժէքներուն տարածումով ու պաշտպանութեամբ. ՀՕՄ-ը իր ժրաջան մեղուներով սատար կը կանգնի Սուրբ Յակոբ ազգային երկրորդական վարժարանին ու հայութեան ամենուրեք սկսած Հայաստանէն, Արցախէն հասնելով մինչեւ Լիբանան ու Սուրիա. ՀՄԸՄ-ը իր «Կամք» մասնաճիւղով հայրենասիրական ոգին կը փոխանցէ նոր սերունդին, Համազգայինի «Սանահին» մասնաճիւղը իր մշակութային ու կրթական առաքելութեամբ երգով, նուագով, պարով, թատրոնով, գրադարանով, գրատարածով, պատմութեան ժամով, ցուցահանդէսներով ու զանազան ձեռնարկներով աշխոյժ կը պահէ մեր գաղութը։ Այս կեդրոնէն ներս, միասնական ճիգերով կը դիմազրաւենք մեր առջեւ դրուած բոլոր մարտահրաւէրները, եւ կը շարունակենք մեր պայքարը ջահը փոխանցելով սերունդէ սերունդ։

Անահիտ Պալեան

Խմբագրական

«Խաղաղութեան դարաշրջան»ը՝ Արցախի հարցով վերջնական զիջումներու մեկնակետն է

Ապրիլ 13–ին, Հայաստանի հանրապետության Ազգային ժողովի նիստի իր ելույթով, Նիկոլ Փաշինեան յստակօրէն յայտարարեց, որ կը նախապատրաստուի Արցախը Ատրպէյճանի ենթակայութեան յանձնել՝ ստորագրելով համաձայնագիր:

Փաշինեանի եւ իր վարչախումբի դիւանագիտական տհասութեան ու քաղաքական սնանկութեան պատճառով այսօր լրջագոյն սպառնալիքի տակ կը գրուի Արցախի անվտանգութիւնը եւ Հայաստանի իքնիշանութիւնն ու ապագայ լինելութիւնը:

2018–ի Ապրիլէն մինչեւ 2022 թուականի Ապրիլ, թաւշեայ յեղափոխականներու նպատակակէտն էր ճանապարհ հարթել Արցախի վերջնական յանձնումին: Նոյն այս խմբաւորումը, ժողովրդավարութեան գերարժեւորումը մեկնակէտ ունենալով, չորս տարուան ընթացքին քաղաքական պատրանախաբուլթեան թմբիրով վարակեց ժողովուրդի ստուար հատուածը:

1991–ին, սեպտեմբեր 2–ին Ստեփանակերի մէջ կայացած Լեւոնային Ղարաբաղի մարզային եւ Շահումեանի չրջանային խորհուրդներու պատգամաւորներու համատեղ նիստին՝ ընդունուեցաւ «Լեւոնային Ղարաբաղի Հանրապետութեան հռչակագիր»ը եւ կեանքի կոչուեցաւ հայկական երկրորդ պետութիւնը: Նոյն տարուան դեկտեմբեր 10–ին, Արցախի բնակչու–

թիւնը հանրաքուէով ամրագրեց ինքնիշխան ու անկախ Արցախի Հանրապետութեան հռչակումը: 31 տարի առաջ Արցախի հայութիւնը վճռեց իր պատմական բնօրրանին վրայ անկախ պետութիւն հիմնել ու իր ազատ ինքնորոշման իրաւունքով ապրիլ իր հողին վրայ:

Ոչ ոք իրաւունք ունի կամայականօրէն խախտելու Արցախի անկախութեան հռչակագրի պայմանները եւ յատկապէս Նիկոլ Փաշինեանն ու իր վարչախումբը ոչ մէկ իրաւասութիւն ունին որոշելու Արցախի եւ արցախահայութեան ճակատագիրը:

2020 թուականի պատերազմէն ետք, հակամարտութիւնը ռազմական ճանապարհով լուծելու Պաքուի վարքագիծն ու ձգտումները, եւ այդ նպատակով Հայաստանի եւ Արցախի Հանրապետութեանց դէմ յարձակողապաշտ ռազմական գործողութիւնները երբեք չեն երաշխաւորեր Արցախի կարգավիճակի «նշաձողը իջեցնելու» այլընտրանքային հնարաւորութիւն: Աւելի՛ն, Ատրպէյճանի ենթակայութեան ներքոյ՝ վերջնականապէս կը հայաթափուի Արցախն ու կորստեան կը մատնուի հայ ժողովուրդի պատմական բնօրրանի արեւելեան դարպասը:

Ատրպէյճանական զինուած ուժերու հետեւողական սպառազինման գործընթացը, թուրք–ատրպէյճա–

նական ռազմական համագործակցութիւնն ու Հայաստանի սահմանները խախտելու փորձերը՝ կը վկայեն այն մասին, որ Ցեղասպանութեան ենթարկուած հայութեան որեւէ մէկ հատուած, առ այսօր ենթակայ է բնաջնջման եւ հայրենազրկման սպառնալիքին:

Ապրիլ 14–ին, Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովը միաձայնութեամբ ընդունեց յայտարարութիւն մը, որուն բովանդակութեան մէջ անընդունելի կը նկատուի Արցախի համար որեւէ այլ կարգավիճակ, բացի ինքնորոշումէն:

«Իմ քայլ»ական վարչախումբի «Խաղաղութեան դարաշրջան»ը՝ նոր զիջումներու մեկնակէտն է, մեր պետականութեան ինքնիշխանութիւնը նսեմացնող անհեռատեսութեան եւ ինքնախաբէութեան կործանարար փորձութիւն է: Խաղաղութեան գինը՝ անձնատուութիւնը չի կրնար ըլլալ, խաղաղութեան գինը՝ պատմական հայրենիքի մասնատումը չի կրնար ըլլալ:

Բեկումէն ետք յառնելու, պարտութիւնները կանխելու եւ նուաճումներ վերակերտելու պահն է, հայ ժողովուրդի լինելութեան երթը վերստին անբեկանելի դարձնելու ու անվկանդ վճռակամութեամբ համակուելու պահն է: Ազգովին դիմադարձեք ու դէմ կանգնինք այս ճակատագրական փորձութեան:

«Հորիզոն»

Յիշենք բոլորը մէկ առ մէկ

Օրացոյցի թերթիկը կը յիշեցնէ, որ այսօր 13 Ապրիլ է. Լիբանանի քաղաքացիական պատերազմի բռնկումին յիշատակման օրն է:

47 տարի առաջ, այսօրուան պէս, 13 Ապրիլ 1975–ին, Այն Ռամսէնէի օթոպիւսին տխրահռչակ դէպքով Լիբանան մտաւ քաղաքացիական երկա՛ր պատերազմի մը մէջ, որուն զինուորական ճակատումներուն հանգրուանը աւարտեցաւ Թաէֆէի 1989–ի համաձայնութեամբ, բայց քաղաքական, տնտեսական, քարոզչական–տեղեկատուական ճակատումները կը շարունակուին մինչեւ այսօր, բոլոր ճակատներու վրայ եւ պարբերական սաստկութեամբ:

47 տարի ետք, այսօր, պատերազմը տակաւին կանգ չէ առած: Պարզապէս գէնքերն են, որոնք փոխուած են: Գնդացիբին փոխարինած է տոլարի գէնքը, թնդանօթին եւ հրասալլին տեղը գրաւած են տնտեսական ճնշումները եւ ընկերային ցանցերու գրոհները, որոնք օրական աւերներ կը գործեն: Այլապէս, լիբանանցիք տակաւին ելեկտրականութիւն եւ ջուր կը մուրան: Ալիւրի եւ վառելանիւթի տաքնապներ կը դիմադրաւեն: Փուռերու եւ դեղարաններու առջեւ երկար շարքեր կը կազմեն, իսկ օտար դեսպանատուներու առջեւ... արտագաղթի համար պոչ կը բռնեն:

Ճիշդ է, առաջ պատնէշներ չկան այլեւս չրջաններու միջեւ, բայց անոնց փոխարէն բարձրացած են շատ աւելի վտանգաւոր՝ քաղաքական–հոգեբանական պատնէշներ, որոնք անկարելի կը դարձնեն կողմերու միջեւ երկխօսութիւնն ու համախոսութիւնը, համաձայնութիւնն ու ազգային միացեալ տեսլականներու մշակումը:

Լիբանանցիք մինչեւ հիմա դասեր քաղած պէտք է ըլլային իրենց երկարամեայ պատերազմէն, թանկագին զոհերէն եւ միլիոններու հասնող վնասներէն: Իսկ այդ դասերէն մեծագոյնը, անկասկած, պէտք էր ըլլար ա՛յն, որ համայնքներու, կուսակցութիւններու եւ քաղաքական խայտաբղէտ հոսանքներու այս երկիրը կը գոյատեւէ դիմացինը ընդունելով այնպէս ինչպէս որ է: Ո՛չ ոք կրնայ ջնջել ոչ ոքի: Ո՛չ ոք ինքզինք կրնայ պարտադրել դիմացիին: Մերժումը եւ անտեսումը տեղ տուին այս երկրին մէջ, որովհետեւ վերջաւորութեան բոլորը պիտի գոյակցին միասնաբար՝ համախոհական ժողովրդավարութեան սկզբունքով: Բոլորը պիտի նստին բանակցութեան նոյն սեղանին շուրջ՝ միասնաբա՛ր լուծումներ գտնելու իրենց սնանկացած հայրենիքին եւ անոր կազմաքանդուած պետութեան ահաւոր կացութեան:

Լիբանանեան քաղաքացիական պատերազմի բռնկումի 47–րդ տարեկիցին այս օրը նաեւ առիթ է յիշելու բոլոր անոնք, որոնք ինկան այդ պատերազմին ընթացքին:

Ինկողներու շարքին էին բազմաթիւ հայորդիներ, որոնք զոհ գացին պատերազմի կոյր ռմբակոծումներուն



եւ կամ հայահոծ թաղերու ինքնապաշտպանութեան հերոսական կռիւներուն: Շատերը զոհուեցան հայութեան դրական չէզոքութեան քաղաքականութեան պահպանման ի խնդիր, հայ համայնքի ինքնուրոյն կեցուածքներուն եւ սեփական շահերուն պաշտպանութեան ի խնդիր: Շատերը ինկան իրենց ժողովուրդի կարիքներուն հասնելու ճամբուն վրայ, իսկ շատ–շատերն ալ կենդանի նահատակներ դարձան իրենց նմաններուն մատուցած անմնացորդ ծառայութիւններուն ճամբով:

13 Ապրիլ է այսօր:
Օրն է յիշելու բոլորը մէկ առ մէկ՝ նահատակնե–

րէն մինչեւ անձնագոհները, պատնէշի վրայ ինկողներէն մինչեւ քաղաքական, տնտեսական, ընկերային պայքարի ճակատներուն վրայ մարտնչած բոլոր նուիրեալները: Բոլոր անոնք, որոնք հաւատացին Լիբանանի անկախութեան, գերիշխանութեան եւ միասնականութեան: Եւ բոլոր անոնք, որոնք խոր համոզումով հաւատացին ամուր, կազմակերպ եւ կենսունակ լիբանանահայութեամբ հզօր եւ անընկճելի հայութիւն մը ունենալու համահայկական անժխտելի հրամայականին:

ՎԻԳԷՆ ԱԽԱԳԵԱՆ

Pashinyan ready to recognize Azerbaijan’s territorial integrity

YEREVAN—Armenian PM Nikol Pashinyan said that he is prepared to “lower the bar” regarding the status of Artsakh in negotiations on a peace agreement with Azerbaijan.

During a one-hour speech to the Armenian National Assembly on April 13, Pashinyan said that Armenia faces pressure from the international community to slightly lower its claims to Artsakh.

“Today the international community clearly tells us that to be the only country in the world that on a bilateral level does not recognize the territorial integrity of an ally of Turkey, Azerbaijan, is a great danger not only for Artsakh but also for Armenia. Today, the international community again tells us to lower the bar a bit regarding the question of the status of Artsakh, and you will ensure a great international consolidation around Armenia and Artsakh. Otherwise, the international community says, do not rely on us, not because we do not want to help you, but because we cannot help you,” he said.

Pashinyan reiterated that Armenia is prepared to recognize the territorial integrity of Azerbaijan. He did not specify whether Artsakh would be included within the borders of Azerbaijan.

“Status in the current situation is not a goal, but rather a means to guarantee the security and rights of the Armenians of Nagorno Karabagh,” he said. “We have said that Armenia has never had territorial claims on Azerbaijan and the Artsakh issue is not a matter of territory but rather a matter of rights. Therefore, we state that for Armenia security guarantees for the Armenians of Artsakh, the guarantee of their rights and freedoms and clarification of the final status of Nagorno-Karabagh are of fundamental importance.”

During an April 6 summit hosted by European Council President Charles Michel in Brussels, Pashinyan and Azerbaijan’s President Ilham Aliyev agreed to prepare for negotiations on a bilateral peace agree-

ment. The leaders also agreed to launch a joint border commission to demarcate and delimit the Armenia-Azerbaijan border by the end of April.

On March 14, Azerbaijan’s Ministry of Foreign Affairs published a list of five principles that it had submitted to its Armenian counterpart several days earlier. The principles included mutual recognition of each other’s sovereignty and territorial integrity, mutual affirmation of the absence of territorial claims to each other and a legally binding obligation not to make such claims in the future, refraining from threatening each other’s security, delimitation and demarcation of the border and unblocking of communication and transport links.

In response, the Armenian Foreign Ministry announced that it had applied to the OSCE Minsk Group co-chairs to “organize negotiations on the signing of a peace agreement” between the two countries.

However, relations with the Minsk Group co-chairs, which include the United States, France and Russia, have been strained due to the war in Ukraine, according to Pashinyan. Therefore, Pashinyan said during his speech on Wednesday that Armenia is prepared to launch bilateral talks, which “in no way prohibits the involvement of the co-chairs in the process,” in order to sign a peace agreement as soon as possible.

The opposition parliamentary factions have been boycotting the National Assembly this week to protest the outcome of Pashinyan’s meeting with Aliyev, which they state will lead to unacceptable concessions to Azerbaijan.

Armenia Alliance deputy Seyran Ohanyan announced during a parliamentary session on April 12 that the opposition faction would boycott this week’s parliamentary sittings and discussions.

“The recent developments confirm concerns that everything goes according to the Azeri-Turkish agenda. With the

Continued on page E2

Officials who undermined security of Armenia, Artsakh must be brought to account: Former Ombudsman Arman Tatoyan

YEREVAN—Armenia’s former Ombudsman Arman Tatoyan says all officials, who have made statements undermining the security of Armenia and Artsakh, must be held to account.

“All the official statements or steps, including by the head of the Armenian government, that have undermined the security of Armenia and Artsakh

and contributed to the violation of our people’s rights for their own political interests, including the statements conceding Armenia’s territorial jurisdiction to Azerbaijan, are unlawful and have no legal force,” Tatoyan wrote on Facebook on April 15.

“All those officials must be held accountable,” he said.

Artsakh demands Armenian authorities renounce “catastrophic” stance on status

STEPANAKERT—The National Assembly of Artsakh has demanded that the authorities of Armenia renounce their “catastrophic position” on the status of Karabagh.

The Karabagh parliament published the text of their latest declaration following speeches by Prime Minister Nikol Pashinyan who said that the international community is telling the Armenian side to lower its “benchmark on the status of Nagorno-Karabagh a little and ensure greater international consolidation around Armenia and Artsakh.”

“The current legal and political status of the Republic of Artsakh has been formed by the will of the people as a result of three referendums and the adoption of a constitution based on their results and through a nationwide agreement established in the previous years,” the parliament’s declaration reads.

“The Armenians of Artsakh are well aware of the price of peace. The statehood of Artsakh, the right to live freely and independently in the historical homeland are absolute values from which even the threat of war cannot keep us.

“According to Armenia-Azerbaijan “peace” agenda, any negotiation process to annex Artsakh to Azerbaijan as well as the signing of the resulting document, undermines not only the statehood of Artsakh, but also the inalienable right of the Armenians of Artsakh to live in their historical homeland.”

Lawmakers said they demand that the authorities of Armenia renounce their “catastrophic position” and be guided by said values. They said no government has the right to lower the bar of internationally recognized self-determination to a status unacceptable to Artsakh, under the pretext of “peace.”

Celebrating Palm Sunday in Aghavno: a rebellious act of existence

BY IRINA SAFARYAN



STEPANAKERT—Have you ever been to Artsakh? If yes, you probably remember the first village of small, cozy houses with red rooftops. That’s the border village of Aghavno, connecting Artsakh with Armenia. It’s one of the cradles of hope and revival located in the Lachin corridor (the tiny pass controlled by Russian peacekeepers to help Armenians living in Artsakh freely and safely travel to and from Armenia) where several hundred people defended their right to live and didn’t flee the village even when it was deprived of electricity, water and other utilities. To this day, there is no gas in Aghavno; residents use electricity and wood-fired ovens to heat their homes.

The village recently celebrated Palm Sunday (Tsaghkazard in Armenian). The celebration was organized by locals and members of an initiative known as Mshakutamet (literally translates to “close to the culture”). There was so much happiness and joy in this small village that I couldn’t resist sharing my experiences from the day.

Mshakutamet is an educational, cultural initiative founded in 2020 during the Artsakh War. Its goal is to spread Armenian culture, traditions and rich heritage especially in the border villages of Armenia and Artsakh. There are about 50 teachers, young and talented professionals who, by the way, are all volunteers. They started their initiative in Tavush and hosted classes in Eraskh. Now, they are at the “Gate of Artsakh”—Aghavno. Young people from all over Armenia are giving classes on embroidery, reading, guitar, national songs and dances,

